ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ պրոռեկտոր

Է. Վ. Ասրիյան

22.07.2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Լիանա Գագիկի Ավետիսյանի «Ս. Ստեփանոս Նախավկան հայ կրոնական տեքստերում, ժողովրդական պատկերացումներում ու արդի պրակտիկաներում» ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի հուլիսի 2-ի նիստում քննարկվեց Լիանա Գագիկի Ավետիսյանի «Ս. Ստեփանոս Նախավկան հայ կրոնական տեքստերում, ժողովրդական պատկերացումներում ու արդի պրակտիկաներում» ատենախոսական աշխատանքի վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Ավետիսյանը, ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. Պավել Ավետիսյանը, պ.գ.դ., դոց. Արսեն Բոբոխյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռաֆիկ Նահապետյանը, պ.գ.թ. դոցենտ Արտակ Գնունին, դասախոսներ Լեռնիկ Հովհաննիսյանը, Արտյոմ Անանյանը:

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Ռ. Նահապետյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Գնունին, Ա. Անանյանը: Նիստի մասնակիցները արձանագրում են հետևյալը.

Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսությունը Ս. Ստեփանոս Նախավկայի վերաբերյալ, ի տարբերություն Հայաստանում մեծ կարևորություն և լայն տարածում ունեցող մի շարք այլ սրբերի, մինչ օրս որևէ մասնավոր և համապարփակ հետազոտություն չի իրականացվել: Մասնավորապես, 20-րդ դարի ակադեմիական հայագետները հոդվածներով և գիտաժողովներով անդրադարձել են Ս. Կարապետի (Հովհաննես Մկրտչի) կերպարին, Ս. Սարգսին և մասամբ՝ Ս. Գևորգին, քննարկել են քրիստոնեական սրբերի վերաբերյալ հայկական վարքերը, սակայն առաքելական շրջանի սրբերից Ս. Ստեփանոս Նախավկային գործնականում չեն անդրադարձել: Հայկական վարքերում նույնպես որևէ շոշափելի անդրադարձ Ս. Ստեփանոսի կերպարին չկա. գլխավոր շեշտադրումը նրա բացառիկ՝ «նախավկա» լինելու հանգամանքի արձանագրումն է: Այս համատեքստում Լիանա Ավետիսյանի աշխատանքն ըստ էության առաջին հարցադրումային և հնարավորինս համապարփակ անդրադարձն է համաքրիստոնեական մի սրբի կերպարին, որը, համահայկական տարածվածությամբ հանդերձ, գործնականում մնում է «անծանոթ» թե՛ ակադեմիական, թե՛ հանրային և թե՛ նույնիսկ կրոնական շրջանակներին: Ատենախոսի գլխավոր խնդիրն է՝ փաստական նյութերի հիման վրա վեր հանել հայկական իրականությունում առանձնակի չքննարկված, սակայն միջնադարում մեծ ընդունելություն ունեցող այս կերպարի վերաբերյալ տեղեկությունները: Աշխատանքում նպատակ է հետապնդվում ցույց տալու այդ կերպարի կարևոր առկայությունը հայոց նյութական (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ) ու հոգևոր-կրոնական մշակույթում:

Ատենախոսությունը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից (տեքստային աղյուսակներ, լուսանկարներ, քարտեզներ):

Լիանա Ավետիսյանը հայոց մեջ Ս. Ստեփանոսի կերպարի քննարկումը սկսում է նրա համաքրիստոնեական ընկալումների ներկայացմամբ, ինչին նվիրված է ատե-

նախոսության առաջին գլուխը՝ «Սուրբ Ստեփանոս Նախավկայի պաշտամունքի սկզբնավորումն ու համաքրիստոնեական նշանակությունը», որը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից. «Ս. Ստեփանոսը՝ որպես համաքրիստոնեական սուրբ», «Ս. Ստեփանոսի տոնի ձևավորումն ու ծիսական կանոնակարգումը», «Ս. Ստեփանոսի մասունքների հայտնությունը և պաշտամունքի տարածման պատմական ընթացքը: Դրանք արձանագրում են Ս. Ստեփանոսի կերպարի կարևորության ընդգծումը դեռևս 4-5-րդ դարերից սկսած: Արդեն 5-րդ դարի կեսերից Ս. Ստեփանոսի անունը կրող եկեղեցիները սկսում են լայնորեն տարածվել ողջ քրիստոնեական աշխարհում՝ դառնալով ուխտագնացության կարևոր կենտրոններ: Այդ ժամանակահատվածում երուսաղեմյան կյանքում առկա էր նաև հայկական քրիստոնեական համայնքը, որը, բացի համաքրիստոնեական աշխարհի հետ ունեցած ընդհանուր հարաբերություններից, էական ազդեցություն էր ունենում մասնավորապես Հայաստանում նոր ձևավորվող քրիստոնեական պաշտամունքի կանոնակարգման ընթացքի վրա: Արդեն 4-5-րդ դարերում Երուսաղեմում արդեն իսկ գործում էին հայկական վանքեր ու եկեղեցիներ: Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Ս. Ստեփանոսի կերպարը հայկական պաշտոնական և ժողովրդական քրիստոնեությունում», հեղինակը հետևողականորեն անդրադառնում է «Ս. Ստեփանոսի կերպարը հայ պատմագրության մեջ» խնդրին՝ Ագաթանգեղոսից, Փավստոս Բուզանդից և Եղիշեից սկսած, և արձանագրում, որ «Եղիշեի գործում սուրբ Ստեփանոսը դառնում է հայ նահատակության և ազգային դիմադրության համատեքստում նշանակալի խորհրդանշական կերպար»: Այնուհետև քննության են առնվում պատմագիրներ Մովսես Դասխուրանցու, Անանուն պատմիչի (կարծեցյալ Շապուհ Բագրատունի), Ստեփանոս Օրբելյանի, Թովմա Մեծոփեցու և Առաքել Դավրիժեցու տեղեկությունները՝ ուսումնասիրությունը հասցնելով մինչև 19–20-րդ դարերի հեղինակների գրանցումները: Այս գլխում ատենախոսն անդրադառնում է նաև հայկական միջավայրում Ս. Ստեփանոսի մասունքների պաշտամունքի սկզբնավորմանն ու դրսևորումներին, նրա անունը կրող սրբավայրերի աշխարհագրությանը, ինչպես նաև սրբավայրերի, ուխտավայրերի ու ուխտագնացությունների նկարագրությունների

քննությանը: Կազմվել է Ս. Ստեփանոսի անվամբ առկա հուշարձանների համահավաք ցանկը՝ միաժամանակ ներկայացնելով դրանց ժամանակագրական և աշխարհագրական բաշխման խտությունը: Ս. Ստեփանոսի կերպարի ներմուծման, տարածման և հանրայնացման վերլուծությամբ հեղինակը բացահայտում է դրանց կապը ժամանակի ներհայկական և տարածաշրջանային քաղաքական զարգացումների հետ: Մասնավորապես, հենվելով Ռշտունյաց նախարարական տան ներկայացուցիչ Վարդ Պատրիկի ապաշխարության և վերածննդի օրինակի վրա, նա ցույց է տալիս, թե ինչպես էին նախարարական տները համաքրիստոնեական արժեքների հենքով բարձրացնում սեփական հեղինակությունը: Այս համատեքստում փաստվում է, որ «միջնադարում հայկական ավանդույթը մեծ ուշադրություն է դարձրել Ս. Ստեփանոսին ոչ միայն որպես նահատակի օրինակ՝ ինչպես տեսնում ենք Եղիշեի "Վարդանի և հայոց պատերազմի մասին" երկում, այլև նրա՝ Սուրբ Քաղաքի՝ Երուսաղեմի հետ ունեցած մասնավոր, առանձնահատուկ կապի դիտանկյունից»: Հենց Վարդ Պատրիկն էր, որ 7-րդ դարում Երուսաղեմից Հայաստան բերեց Ս. Ստեփանոսի մասունքը և Վասպուրականում նախաձեռնեց Ս. Ստեփանոսի անվամբ մեծաթիվ կրոնական կառույցների հիմնադրումը: Սա, թերևս, հեղինակի կարևոր հարցադրումներից է այն մասին, թե ինչպես են կոնկրետ քաղաքական ու դավանաբանական զարգացումներն ազդում քրիստոնեական պաշտամունքային կերպարների ընտրության և տարածման վրա: Միաժամանակ, սա անուղղակիորեն պատասխանում է այն հարցին, թե ինչու, ըստ հեղինակի հավաքած տվյալների, Արևելյան Հայաստանում առավել մեծ թիվ էին կազմում Ս. Ստեփանոսի անվան հուշարձաններն ու մասունքները, քան Արևմտյան կամ Բյուզանդական Հայաստանում: Հեղինակը փորձում է հիմնավոր կերպով անդրադառնալ այս խնդրին՝ նշելով, որ «Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Մեծ Հայքի բաժանումից հետո Հայաստանի բյուզանդական հատվածում զգալիորեն թուլացել էին հայ հոգևորականության հնարավորությունները: Հայ ժողովրդի կրոնական կենտրոնները և Բարձր Հայքում՝ Մեծ Հայքի արևմտյան սահմանում գտնվող հայրապետանիստը տեղափոխվել էին պարսկահպատակ Հայաստան»: Հենց Պարսկահայաստանում էլ քանակապես առավել լայն ծավալ են ստացել Հայ Առաքելական Եկեղեցու կողմից

առաջադրվող կարևոր քրիստոնեական կերպարների հուշարձանացման հնարավորությունները:

Այս նույն հարցադրմանն ուղղված մեկ այլ կարևոր անդրադարձ է Ստեփանոս անձնանվան տարածվածության վերաբերյալ հեղինակի դիտարկումը, ինչը նորույթ է հայագիտական քննարկումներում:

Հայ իրականության մեջ Ս. Ստեփանոսի կերպարի զարգացումները հեղինակը վերլուծում է նաև հայկական աշխարհիկ ու հոգևոր վերնախավի՝ ազնվականության և բարձրաստիճան կղերականության շրջանում Ստեփանոս անձնանվան տարածվածության միջոցով: Քանի որ Ս. Ստեփանոսը Հայաստանի հետ անմիջական ծագումնաբանական առնչություն չունեցող համաքրիստոնեական սուրբ էր, ապա նրա անվան գործածության հաճախականությունն ու քանակական ցուցանիշները արժեքավոր վկայություն են տվյալ սրբի նկատմամբ հայաստանյան ընկալումների և դրսևորումների մասին: Աշխատանքում փաստվում է, որ հայկական սոցիալական վճռորոշ շերտերում Ստեփանոս անվան հաճախացումն ու տարածումը նկատվում է 10-րդ դարից սկսած, երբ ակտիվացան Ս. Ստեփանոսի պաշտամունքի քաղաքական ու կրոնական դրդապատճառները՝ բյուզանդական քաղկեդոնական ճնշումների շրջանում համաքրիստոնեական արժեքներին հավատարիմ մնալու և սեփական դիրքորոշումը ցուցադրելու նպատակով: Դրանցից մեկը, ըստ հեղինակի հիմնավոր հարցադրման, վաղ քրիստոնեական շրջանի սուրբգրքյան կերպարների անունների տարածվածությունն էր, ինչը մի շարք օրինակների քննության հիման վրա թույլ է տալիս եզրակացնելու. «Արդյունքում ակնհայտ է, որ սուրբգրքյան անուններից Հայ Առաքելական Եկեղեցու գործող անձանց շրջանում իշխում են Հովհաննես, Հակոբ և Ստեփանոս անունները: Սուրբգրքյան անունների շարքում ՀԱԵ-ում և Աղվանից կաթողիկոսությունում երկրորդ տեղում Ստեփանոսն է: Դա բնականոն երևույթ է, եթե համեմատենք Ս. Ստեփանոսին նվիրված վանքերի, եկեղեցիների, մատուռների ու ուխտավայրերի քանակի հետ: Աղվանից կաթողիկոսությունում նույնպես Ստեփանոսը զբաղեցնում է նույն հորիզոնականը՝ զիջելով միայն Դավիթին և Հովհաննեսին: Ատենախոսը Ս. Ստեփանոսի անվան կարևորությունը համեմատում է Հայաստանում գործած գլխավոր սրբի և

քրիստոնեության ինստիտուցիոնալացման հիմնադիր Գրիգոր Լուսավորչի անվան հետ՝ բացահայտելով ուշագրավ մի իրողություն. Գրիգոր անունը հարյուրամյակներ շարունակ դուրս էր մնացել հայկական հոգևոր անվանացանկից և շրջանառության մեջ վերադարձավ միայն կաթողիկոսական աթոռին Գրիգոր Պահլավունու տոհմի ներկայացուցիչների հայտնվելով: Ըստ էության, անձնանունների վիճակագրությունը քննության առնելով, հեղինակը ոչ միայն փաստագրում է նյութը, այլև բացահայտում է հիմնարար խնդիրներ, որոնք լայնածավալ հետագա վերլուծությունների և հետազոտությունների հեռանկարներ են բացում:

Աշխատանքում արժևորվում են նաև Ս. Ստեփանոսի կերպարի պատկերագրական (քանդակ, մանրանկարչություն) առանձնահատկությունների վերլուծությունները: Արձանագրելով, որ հայկական քրիստոնեական միջավայրում արդեն VI դարից հայտնի էին Ս. Ստեփանոս Նախավկայի քարկոծման տեսարանի պատկերները, հեղինակը մանրամասն քննության է առնում այդ կերպարի պատկերագրական զարգացումները՝ ընդհուպ մինչև ուշ միջնադար և նոր ժամանակներ: Ուշագրավ է Ս. Ստեփանոսի պատկերագրության այն առանձնահատկությունը, ըստ որի՝ նա հաճախ պատկերվում է Ս. Հովհաննեսի հետ՝ Մարիամ Աստվածածնի կողքին: Համաքրիստոնեական պատկերագրությունից այն տարբերվում է նրանով, որ սուրբը հանդես չի գալիս զուտ որպես քարկոծվող զոհ (չնայած այս մոտիվը ևս առկա է), այլ որպես հաղթական կերպար, որը հայկական տեքստերում դրսևորվում է որպես մարդկանց և Աստծո միջև միջնորդ՝ բարեխոս: Հեղինակի դիտարկմամբ՝ Ս. Ստեփանոսի բարեխոսության իրավասությունը հայկական միջավայրում սկզբնավորվում է Հովհան Օձնեցի կաթողիկոսից և այնուհետև զարգանում ինչպես եկեղեցական պաշտոնական ծեսում, այնպես էլ վիմագրական նյութերում, հմայիլներում և աղոթքագրերում՝ վկայելով Հայ Առաքելական Եկեղեցու կողմից տվյալ սրբի բացառիկ դիրքը շեշտելու միտումը:

Ատենախոսությունը հաջողված և հիմնարար աշխատանք է, որտեղ համակողմանիորեն ներկայացված են բարդ ու բազմաշերտ զարգացման ընթացք ունեցող

կերպարի՝ պատմական ուղու գլխավոր դրսևորումներն ու առանձնահատկությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են բազմաբնույթ աղբյուրներ, այդ թվում՝ մատենագրական, վիմագրական, պատկերագրական, բանահյուսական ու դաշտային ազգագրական նյութեր, ինչպես նաև մասնագիտական արժեքավոր վեր-լուծություններ: Աշխատանքն ուղեկցվում է համապատասխան հավելվածներով՝ հուշարձանների ու անձնանունների ցանկերով, քարտեզներով և լուսանկարներով: Լինելով Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարի ուսումնասիրության առաջին հիմնարար փորձը՝ այն լայն հեռանկարներ է բացում նոր հարցադրումների և վերլուծությունների համար, մասնավորապես՝ տարբեր ժամանակաշրջաններում հայոց նախարարական տների ու եպիսկոպոսական աթոռների միջև ընթացող մրցակցության, համաքրիստոնեական աշխարհի հետ փոխառնչությունների, ինչպես նաև մշակութաքաղաքական հիմնախնդիրների համատեքստում: Ցանկալի կլիներ, որ ատենախոսության հեղինակն առաջիկայում ևս անդրադառնա այս հարցերին՝ դրանք դիտարկելով որպես առանձին հետազոտական թեմաներ:

Միևնույն ժամանակ աշխատանքում առկա են որոշ թերացումներ: Մասնավորապես առկա են սրբագրական թերություններ, իմաստային կրկնություններ: Նշված թերացումները բնավ չեն նսեմացնում հեղինակի կատարած մեծ աշխատանքը, ուստի հայցորդը արժանի է հայցած պատմական գիտությունների թեկնածուի շնորհմանը՝ Է.00. 04 « Ազգագրություն » մասնագիտությամբ:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ.՝ Հ. Գ. Ավետիսյան

պ.գ.դ., պրոֆ. Հ. Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, բ.գ.թ., դոցենտ Մ. Վ. Հովհաննիսյան

22.07.2026